

ԱՐԺ. Տ. ԱՐՇԱԿ ԱԲԱԳ ՔՅՆՅ. ԽԱՉԱՏՈՒՐԵԱՆ ՆԵՐԿԱՅ ԿԸ ԳՏՆՈՒԻ
ԴԱՏԱԻՈՐ ՏԻԳՐԱՆ ԹԱԻՐԻՉԵԱՆԻ ԱՆՈՒԱՆ
FELLOWSHIP PROGRAM-Ի ՁԵՆՆԱՐԿԻՆ

Հինգշաբթի, Փետրուար 25ին, 2010, երեկոյեան ժամը 7:00ին San Gabriel County Club-ի մէջ տեղի ունեցաւ Դատաւոր Տիգրան Թաւրիզեանի անուան Fellowship Program-ի Տարածաշրջանային Իրաւաբանական Ծառայութեան (Neighborhood Legal Services) պատասխանատու՝ Ալինա Աննա Ազիզեանի զեկուցումը, տեղեական եւ գաւառային զանազան ծրագիրներու մասին:

Սոյն ձեռնարկին Թեմակալ Առաջնորդ՝ Գերշ. Տ. Յովնան Արք. Տէրտէրեանը կը ներկայացնէր Լոս Անճելըսի Սուրբ Յակոբ Հայց. Եկեղեցւոյ Հոգեւոր Հովիւը՝ Արժ. Տ. Արշակ Աւագ Քինյ. Խաչատուրեան: Ներկայ էին նաեւ գաղութիս հայ եւ օտար մամուլի եւ զանազան կազմակերպութիւններու ներկայացուցիչները:

Բացման խօսքին մէջ Դատաւոր Տիգրան Թաւրիզեան նախ բարձր գնահատեց իր անուան յատուկ սոյն ծառայութեան գրասենեակի պատասխանատու՝ Ալինա Աննա Ազիզեանի տարած աշխատանքը եւ ապա շեշտեց, թէ այս ծրագիրը յատկապէս հիմնուած է հայ գաղութի բոլոր զաւակներուն համար, որոնք կարիքը ունին ընկերային կամ իրաւաբանական զանազան հարցերու լուծման: Ապա ծառայութեան գրասենեակի պատասխանատու եւ օրուան զեկուցաբեր՝ Ալինա Աննա Ազիզեան ընդհանուր գիծերու մէջ մանրամասնեց գրասենեակի տարած բոլոր աշխատանքներն ու հրամցուցած ծառայութիւնները եւ յիշեցուց, թէ Լոս Անճելըս Գաւառի Տարածաշրջանային Իրաւաբանական Ծառայութիւնը (Neighborhood Legal Services) անկախ, ոչ շահութաբեր իրաւաբանական օժանդակութեան կազմակերպութիւն մըն է, որ քաղաքացիական հարցերուն անվճար իրաւաբանական ծառայութիւններ կը մատուցանէ Սան Ֆերնանտո, Սան Կապրիէլ եւ Էմթիլոփ Վէլիներուն, ներառեալ Պըրպէնք, Կլէնտէյլ եւ Փասատինա քաղաքներուն մէջ բնակութիւն հաստատած եւ ցած եկամուտ ունեցող հայերուն համար:

Թաղային Իրաւաբանական Ծառայութեանց հետ կարելի է կապ հաստատել հեռաձայնելով (800) 433-6251 թիւին, իսկ անոնց կայքէջն է www.nls-la.org: